AMX Armenia Stock Exchange

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՐՈՇՈՒՄ

10 նոյեմբերի 2026 թվականի N ՖՊ-108-11/26

ք. Երևան

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ, ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ՑՈՒՑԱԿԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ (Bbond) ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի (այսուհետ նաև՝ Թողարկող) 2026 թվականի հոկտեմբերի 23-ին «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ (այսուհետ՝ Օպերատոր) ներկայացված հայտը և ս.թ. նոյեմբերի 05-ի հայտի լրացումը 5,000,000,000 ՀՀ դրամ ընդհանուր անվանական ծավալով, 100,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 60 ամիս շրջանառության ժամկետով, տարեկան 9.75% արժեկտրոնային տոկոսադրույքով, 50,000 հատ անվանական, արժեկտրոնային պարտատոմսերը ցուցակելու և պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում ընդգրկելու վերաբերյալ, ինչպես նաև Օպերատորի Ցուցակման հանձնաժողովի 2026 թվականի նոյեմբերի 09-ի եզրակացությունը,

Հաշվի առնելով, որ ներկայացված պարտատոմսերը և Թողարկողը բավարարում են Օպերատորի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» (այսուհետ՝ Կանոններ) 12-րդ գլխով սահմանված պահանջներին, հիմք ընդունելով Օպերատորի Կանոնների 6-րդ գլխի 29-րդ կետը, 16-րդ գլխի 79-րդ և 80-րդ կետերը, և, ղեկավարվելով 15-րդ գլխի 68-րդ կետի 1-ին ենթակետով, ինչպես նաև Օպերատորի կանոնադրության 9-րդ գլխի 9.58.-րդ կետի 9.58.5. ենթակետով՝ Գլխավոր տնօրենը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. 2026 թվականի նոյեմբերի 13-ից ցուցակել և պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում ընդգրկել «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի 5,000,000,000 ՀՀ դրամ ընդհանուր անվանական ծավալով, 100,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 60 ամիս շրջանառության ժամկետով, տարեկան 9.75% արժեկտրոնային տոկոսադրույքով, 50,000 հատ անվանական, արժեկտրոնային պարտատոմսերը, որոնց «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ կողմից շնորհվել է **AMACBAB2RER1** ծածկագիրը, միաժամանակ թույլատրել նշված արժեթղթերով հասցեական առևտրի իրականացումը և ռեպո գործարքների կնքումը:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված արժեթղթերին շնորհել **ACBABR** հապավումը:
3. Սույն որոշման ընդունման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում որոշման մեկ օրինակն ուղարկել Թողարկողին:

4. Սույն որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում որոշման մասին տեղեկություններ հրապարակել Օպերատորի առևտրային համակարգի և ինտերնետային կայքի միջոցով համապատասխան ստորաբաժանումների կողմից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ֆինանսական տնօրեն,
Կառավարման խորհրդի անդամ,
Գլխավոր տնօրենի լիազորված ներկայացուցիչ՝ **Դավիթ Շահվերդյան**